



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

20 նոյեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Վաղարշակ Ավետիսյանի անհատական դիմումի ընդունելիության  
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Վաղարշակ Ավետիսյանը 2018 թվականի նոյեմբերի 2-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: 3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

2. Դիմողը նշում է, որ մի շարք այլ գործերի ուսումնասիրության արդյունքում կարելի է վկայակոչել այն փաստը, որ օրենքի փոփոխությունից հետո համապատասխան սուբյեկտները ցմահ ազատազրկումների գրեթե չեն դատապարտվել:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրությանը՝ խախտելով իր սահմանադրական հիմնական իրավունքը, մասնավորապես, իր իրավական վիճակը բարելավող նորմին հետադարձ ուժ տալու հնարավորությունը:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով ավելի խիստ որոշակի ժամկետով ազատազրկում նախատեսող նորմը թեև առաջին հայացքից խստացնող է, սակայն իր դեպքում չպետք է կիրառվի տառացի մեկնաբանությամբ, քանի որ դատարանն ավելի խիստ պատժաչափ սահմանելու հնարավորության դեպքում կկարողանար խուսափել ոչ համաչափ ցմահ ազատազրկում պատժատեսակը կիրառելուց, ուստի նշված նորմին պետք է հետադարձ ուժ տրվի առնվազն ցմահ դատապարտվածների իրավունքների խախտումների բացառման նպատակով:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները: Այսպես, գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. սեպտեմբերի 1-ի դատավճռով Վաղարշակ Արամայիսի Ավետիսյանին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ կետերով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցանքներում: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 4-րդ

կետերով դատապարտվել է ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատապարտվել է ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտվել է ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով և ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով դատապարտվել է ցմահ ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները կլանելու միջոցով, Վաղարշակ Արամայիսի Ավետիսյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակվել է ցմահ ազատազրկում:

Վաղարշակ Արամայիսի Ավետիսյանը դիմում է ներկայացրել էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերանայել նույն դատարանի 01.09.2009թ. թիվ ՀՔԲԴ1/0010/01/09/ դատավճիռը՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.05.2011թ. ՀՕ-143-Ն օրենքի:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2011 թվականի հուլիսի 4-ին որոշել է. «Դիմումը բավարարել: Վերանայել Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 01.09.2009թ. թիվ ՀՔԲԴ1/0010/01/09/ դատավճիռը: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.05.2011 թվականի ՀՕ-143-Ն օրենքի համաձայն, դատապարտյալ Վաղարշակ Արամայիսի Ավետիսյանին առաջադրված մեղադրանքից հանել արարքի կրկնակիությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով առաջադրված մեղադրանքը և դատավճիռը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին: Դատապարտյալ Վաղարշակ Արամայիսի Ավետիսյանին առաջադրված մեղադրանքից հանել արարքի կրկնակիությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը և դատավճիռը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 1-ին մասին, որով պատիժ սահմանել ազատազրկում 1 տարի ժամկետով: Դատավճիռը Վ. Ավետիսյանի վերաբերյալ պատժի և մնացած մասերով թողնել անփոփոխ»:

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի սույն որոշումը դիմողը չի բողոքարկել վերաքննության կարգով, այսինքն՝ չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, հենվելով համապատասխան սահմանադրական նորմի վրա, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) **երբ սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր միջոցները,**

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Վաղարշակ Ավետիսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



20 նոյեմբերի 2018 թվականի  
ՍԴԴԿՈ-6